ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 23

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

Հաստատել Պտղնի համայնքի ավագանու թիվ 6 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը հաստատելու մասին:
2. Համայնքային սեփականություն համարվող հողամասերն աճուրդ վաճառքի միջոցով օտարելու թույլտվություն տալու մասին:
3. Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 11-ի N 17 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

/ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾՐԱԳՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետի պահանջների, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ ***ավագանին որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեից սուբվենցիա ստանալու նպատակով «Պտղնի համայնքի 1-ին փողոցի նորոգում ասֆալտապատմամբ և 3-րդ փողոցի մասնակի ասֆալտապատման աշխատանքներ» ծրագրի բյուջետային ֆինանսավորման հայտը, համաձայն հավելվածի (հայտը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի
մայիսի 19-ի N 24 որոշման

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրիանվանումը	Պտղնի համայնքի 1-ին փողոցի նորոգում ասֆալտապատմամբ և 3-րդ փողոցի մասնակի ասֆալտապատման աշխատանքներ
Մարզ	*Կոտայք*
Համայնքը /համայնքները	*Պտղնի*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*3 կմ, 35 կմ*
Համայնքի /բնակավայրի/ բնակչությունը	*1846 մարդ*
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի/	
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	*Ոչ*
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակնշելով՝ - ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման տևողությունը, - գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը, - ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը, - լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ	Համայնքը սնվում է Արզական–Երևան ջրատարից, ունի 24 ժամյա ջրամատակարարում, համայնքի շուրջ 80% գազաֆիկացված և 100 % էլեկտրաֆիկացված է: Փողոցային լուսավորությունը համայնքում կազմում է շուրջ 70%: Ճանապարհային ցանցը գտնվում է բարվոք վիճակում: Ոռոգման ցանց համայնքում առկա չէ:
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	Անհրաժեշտություն կա նորոգելու համայնքի ներհամայնքային ճանապարհները: Համայնքում ամեն տարի կատարվում է շուրջ 1000 քմ մակերեսով փոսալցման և ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, որը

	Ներհամայնքային փողոցները ունեն խիստ վերանորոգման կարիք:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	1 Բնակչության և տրանսպորտի տեղաշարժը դարձնել անվտանգ 2 Վերանորոգել դեպի համայնք մուտք հանդիսացող փողոցները
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	Նախատեսվում է գնումների գործընթացի կազմակերպում շահած կազմակերպության հետ պայմանագրերի կնքում շին. աշխատանքների ընթացքի պատշաճ կատարման ապահովում: Նորոգվող փողոցների երկարությունը կազմում է 5.0 կմ, մոտավոր 1500 քմ երթեվեկելի մասի վերանորոգում: Վերջնական արդյունքի ընդունում և վճարում:
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են, որի իրականացման արդյունքում համայնքի սեփականություն հանդիսացող հիմնական միջոցների՝ ճանապարհների արժեքը կավելանա նախահաշվային արժեքի չափով:
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Շահառուները համայնքի ողջ բնակչությունն է: 1. Համայնքի բնակչությունը և տրանսպորտային միջոցները ավելի արագ կկարողանան հասնել մայրաքաղաք 2. Այդ հատվածով երթևեկող մեքենաների մաշվածությունը կնվազի մոտ 40%-ով: 3. Տաքսի և առաքիչ կազմակերպությունները ավելի արագ և հեշտությամբ կիրականացնեն իրենց աշխատանքները: 4. Կլինեն բարեկարգ փողոցներ
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	Հիմք ընդունելով աշխատանքային նախագիծը, ծրագրի իրականացման ընթացքում կբացվի մոտ 10 ժամանակավոր աշխատատեղ:
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 63 922 717 ՀՀ դրամ .

	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	63922717	73413747	115
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից	42448200	43670747	103
- Սեփական եկամուտներ	23354000	23767247	102
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	21474517	29743000	138
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	63922717	54294257	85
- Վարչական բյուջեի ծախսեր	42448200	41906358	99
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	21474517	12387899	58
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից	21474517	12387899	58

• աղբահանում	700000	700000	100
• ջրամատ	12030639	5759316	48
• այլ մշակութային միջոցառում	5412278	2924983	54
• ապարատ	1300000	972000	75
• ասֆալտապատում	1731600	1731600	100

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

Ընթացիկ տարվա բյուջեն՝ **62 844 400 ՀՀ դրամ ,**

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	62844400
• *Վարչական բյուջեի եկամուտներ, որից*	47248900
• *սեփական եկամուտներ*	25780000
• *Ֆոնդային բյուջեի եկամուտներ*	15595500
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, *որից*	62844400
• *Վարչական բյուջեի ծախսեր*	47248900
• *Ֆոնդային բյուջեի ծախսեր*	15595500
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից*	15595500
• *Ճանապարհաշինություն (փոսալցման աշխատանք)*	6861000
• *Փողոցների լուսավորության անցկացում*	1000000
• *Ջրամատակարարում (սուբվենցիա)*	6545200
• *Այլ մշակութային միջոցառում (սուբվենցիա)*	1189300

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով)

Պտղնի համայնքի 2021 թվականի կանխատեսվող եկամուտները կազմում են 47 248 900 ՀՀ դրամ, ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով 2021 թվականին կանխատեսվող մուտքերը:

Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝
- շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 480000 դրամ,
- նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 45000 դրամ,
- տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ,
- հեղինակային հսկողության

9148000 դրամ (100%),

_____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, Ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման /նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*6861000 դրամ (75%)*
Այլ ներդրողներ	*0 դրամ(.... %), նշելներդրողիանունը:*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը հուլիս 2021թ. Տևողությունը 6 ամիս*
Ծրագրի ծախսերը	*Կից ներկայացվում է տեխնիկական բնութագիրը*
Ամսաթիվ	*19 մայիսի 2021թ.*

Համայնքի տնտեսական պատասխանատու՝
Հեռախոսահամարը՝ (+374 222) 57070, էլեկտրոնային փոստը՝ ptghnihamaynq@mail.ru

Ռուբեն Հարությունի Ստամբոլցյան

Համայնքի ղեկավար՝ Ա. Վիրաբյան
(անունը, ազգանունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 25

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ *ավագանին որոշում է.*

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող բանկավայրերի նշանակության 1.443 հա հասարակական կառուցապատման հողամասը, բնակավայրերի նշանակության 0.01866 հա բնակելի կառուցապատման հողամասը, գյուղատնտեսական նշանակության 6.61956 հա արոտավայրը և 3.70789 հա այլ հողատեսքը 12 լոտով օտարել աճուրդ վաճառքով և մեկնարկային գինը հաստատել հողամասերի կադաստրային արժեքի 100% և ավել չափով՝

1) լոտ 1 կոդ 07-054-0332-0020; Կոտայքի մարզ գ. Պտղնի 23-րդ փողոց թիվ 12 հասցեում գտնվող 1.443 հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս, մեկնարկային գինը 42000000 ՀՀ դրամ:

2) լոտ 2 կոդ 07-054-0217-0062; Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի հին այգետարածք 14-րդ թաղամաս թիվ 19/1 հասցեում գտնվող 0.01866 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամաս, մեկնարկային գինը 600000 ՀՀ դրամ:

3) լոտ 3 կոդ 07-054-0330-0050; 1.6 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 110000 ՀՀ դրամ:

4) լոտ 4 կոդ 07-054-0320-0003; 0.84577 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 60000 ՀՀ դրամ:

5) լոտ 5 կոդ 07-054-0320-0002; 0.45055 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 35000 ՀՀ դրամ:

6) լոտ 6 կոդ 07-054-0320-0004; 1.53508 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 105000 ՀՀ դրամ:

7) լոտ 7 կոդ 07-054-0323-0012; 0.86 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 60000 ՀՀ դրամ:

8) լոտ 8 կոդ 07-054-0323-0013; 1.02816 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 70000 ՀՀ դրամ:

9) լոտ 9 կոդ 07-054-0330-0060; 0.3 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, մեկնարկային գինը 22000 ՀՀ դրամ:

10) լոտ 10 կոդ 07-054-0327-0046; 0.35 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 25000 ՀՀ դրամ:

11) լոտ 11 կոդ 07-054-0332-0028; 2.00389 հա գյուղատնտեսական նշանակության այլ

հողատեսք, մեկնարկային գինը 140000 ՀՀ դրամ:
12) լոտ 12 կոդ 07-054-0327-0048; 1.354 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, մեկնարկային գինը 95000 ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻՋԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ՄԱՅԻՍԻ 2021թվականի N 26

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 17 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ***ավագանին որոշում է.***

1. Ուժը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 11-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» N 17 որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՋԻԶԲԵԿՅԱՆ ՎԻԿՏՈՐ

ԱՎԱԳՅԱՆ ԺԱՍՄԵՆ

ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՐԱ

ՎԻՐԱԲՅԱՆ ՀԱԿՈԲ

ՏԱՇՉՅԱՆ ՍԱԹԵՆԻԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ